## ՊԵՏԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ԴՈՒՄԱՆ

Ռուսիոյ վաղուց ի վեր խառնիճաղանճ դրութիւնը շարունակում է ցանկալ շատ և շատ բարեփոխութիւններ. երկրորդ դումայի փակման օրից, որ առաջ եկաւ քաղաքական թիւրիմացութիւնից, լայնատարած երկրի ամբողջ ժողովուրդը առանձին հետաքրքրութեամբ, բայց ոչ մեծ ակնկալութեամբ սպասում էր երրորդին՝ երկու տարուայ ընթացքում։ Ինչպէս տեսնում ենք Դուման մեզ մօտ շուտ շուտ է փոխւում. արդեօք ինչն է պատճառը. վերջնի անբաւարարութի՞ւնը թէ վերջնից անբաւականութիւնը, իբրև մի մարմնից, որը կոչուած էր նոր կեանք ստեղծել Ռուսիոյ մէջ և կարելի է խոստովանել որ արդէն ցոյց էր տուել որոշ յառաջադիմութիւն այդ նախաձեռնութեան մէջ։

Ուզում ենք հաւատ ընծայել վերջնին։

Ընտրական պայքարը անցաւ շատ աննշան կերպով և յաղթանակը տարան աջակողմեաններբ, որոնք և ժողովուելով՝ նոյեմբերի 1-ին բացին նիստը։

Թերահաւատութեամբ սպասումենք արդիւնաւոր գործունէութեան յօգուտ երկրի բարենորոգման։

---

## ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Բժ. Սիմէօն Շահնազարեան. 1905 թուի օգոստ 1-ի ուկազը և ժամանակաւոր կանոնները Մոսկուա 1907.

Ա, Ջանեան. պատկերներ, Բագու 1907.

Մարիկ. Լէօ Դարայեան, Թիֆլիս. 1907.

Գր. Բալասանեան. Հեռու փախիր դրական խուլիգանից. Թիֆլիս 1907.

Ս. Լիսիցեան, Ց. Թումանեան և Շանթ, Լուսաբեր Ա. տ. Թիֆլիս 1907.

Ա. Արեղեանց (Թարգ.) ընդհանուր աշխարհագրութիւն, պատկերազարդ, Թիֆլիս 1907

Ցար. Թումանեանց. ռուս-հայ բառգիրք, Թիֆլիս 1907։

---